ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

# ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

Ա մակարդակ

| 1 | Ե՞րբ է սկսվել հունական գաղութացումը. |
|---|---|

1) Ք.ա. VIII դարում
2) Ք.ա. IX դարում
3) Ք.ա. VI դարում
4) Ք.ա. VII դարում

| 2 | Ե՞րբ է կառավարել կայսր Դիոկղետիանոսը. |
|---|---|

1) 284-325թթ.
2) 280-305թթ.
3) 284-315թթ.
4) 284-305թթ.

| 3 | Ե՞րբ է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու չորրորդ տիեզերական ժողովը. |
|---|---|

1) 466թ.
2) 425թ.
3) 451թ.
4) 476թ.

| 4 | Ե՞րբ է Մոսկվայում հրավիրվել առաջին երկրային ժողովը. |
|---|---|

1) 1559թ.
2) 1549թ.
3) 1550թ.
4) 1561թ.

| 5 | Ե՞րբ է պարտվել սահմանադրական շարժումն Իրանում. |
|---|---|

1) 1911թ.
2) 1906թ.
3) 1905թ.
4) 1908թ.

| 6 | Ե՞րբ է հիմնվել Փահլավիների արքայատոհմը. |
|---|---|

1) 1904թ.
2) 1925թ.
3) 1920թ.
4) 1918թ.

| 7 | Ե՞րբ է տեղի ունեցել Պոտսդամի համաժողովը. |
|---|---|

1) 1943թ. հուլիսի 5-ից օգոստոսի 23-ը
2) 1945թ. փետրվարի 4-11-ը
3) 1945թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը
4) 1943թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը



| 80 | Կատարել համապատասխանեցում. |
|---|---|

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սուդեթական մարզը Գերմանիային հանձնելու համաձայնագիրը | 1. | 1939թ. | 1. | Նորմանդիա |
| 2. | Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում | 2. | 1942թ. | 2. | Մոսկվա |
| 3. | Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագիրը | 3. | 1944թ. | 3. | Վաշինգտոն |
| 4. | Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը | 4. | 1938թ. | 4. | Մյունխեն |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 4 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 2 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 2 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 4 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 3 | 2 |
| 4 | 4 | 3 |

78 **Իրավական փաստաթղթերը համապատասխանեցնել դրանց ընդունման տարեթվերին.**

1. «Համադաշնության հոդվածներ»
2. «Ազգերի իրավահավասարության մասին» օրենք
3. «Անձի անձեռնմխելիության մասին օրենք»
4. «Իրավունքների մասին օրենքներ»
5. «Ազատ ձեռներեցության մասին օրենք»

ա. 1775թ.
բ. 1791թ.
գ. 1776թ.
դ. 1781թ.
ե. 1868թ.
զ. 1679թ.

1) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-դ
2) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-գ
3) 1-դ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-ա
4) 1-գ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-բ

79 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Խաղաղության համաշխարհային համաժողովի գումարումը | 1. | 1891թ. | 1. | Բեռն |
| 2. | Գերմանական կայսրության հռչակումը | 2. | 1889թ. | 2. | Լոնդոն |
| 3. | Ռուսաստանի նախաձեռնությամբ պետությունների միջազգային համաժողովի հրավիրումը | 3. | 1843թ. | 3. | Վերսալ |
| 4. | Խաղաղության միջազգային բյուրոյի ստեղծումը | 4. | 1871թ. | 4. | Հաագա |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 4 | 3 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 1 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 1 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 4 | 3 |



8 **Ո՞վ էր սիրո և մայրության դիցուհին Հին Եգիպտոսում.**

1) Միներվան
2) Կին
3) Հերան
4) Իսիդան

9 **Ու՞մ էր նվիրված շումերական հնագույն վիպական պոեմը.**

1) Ուրուկի արքա Ուտուխեգալին
2) Ուրուկի արքա Գիլգամեշին
3) Բաբելոնի աստված Մարդուկին
4) Բաբելոնի արքա Համմուրապիին

10 **Ո՞ր ճակատամարտում է զոհվել կայսր Վաղեսը.**

1) Սուասոնի
2) Կատալաունյան դաշտի
3) Ադրիանապոլսի
4) Կաննեի

11 **ԱՄՆ-ի ո՞ր նախագահի բարեփոխումների նախագիծն է ստացել «Նոր ազգայնականություն» անվանումը.**

1) Աբրահամ Լինկոլնի
2) Թեոդոր Ռուզվելտի
3) Վուդրո Վիլսոնի
4) Ջորջ Վաշինգտոնի

12 **Ինչպե՞ս էր կոչվում XX դարասկզբին Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը.**

1) «մեծ մահակի» քաղաքականություն
2) «բաց դռների և հավասար հնարավորությունների» քաղաքականություն
3) «կենսական տարածքների նվաճման» քաղաքականություն
4) «օրինական հավասարակշռության» քաղաքականություն

13 **Ո՞վ է Եվրոպան խորհրդային ծավալապաշտությունից փրկելու ծրագրի հեղինակը.**

1) Ֆ. Ռուզվելտը
2) Ու. Չերչիլը
3) Հ. Թրումանը
4) Ջ. Մարշալը

14 **Որո՞նք են ՄԱԿ-ի պաշտոնական լեզուները.**

1) Անգլերենը, իսպաներենը, չինարենը, ֆրանսերենը, իտալերենը
2) Անգլերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը, ֆրանսերենը
3) Ռուսերենը, ճապոներենը, իտալերենը, ֆրանսերենը, չինարենը
4) Իսպաներենը, ռուսերենը, իտալերենը, չինարենը, ֆրանսերենը

15 **Ի՞նչ է Սկուպշչինան.**

1) Մակեդոնիայի բարձրագույն օրենսդիր մարմինը
2) Բուլղարիայի կառավարությունը
3) Սերբիայի բարձրագույն օրենսդիր մարմինը
4) Չեռնոգորիայի Գերագույն դատարանը

16 **Ո՞րն է «համաշխարհայնացում» տերմինի բացատրությունը.**

1) գաղափարաքաղաքական հոսանք, որ քարոզում է անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ
2) արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթացը
3) տնտեսական կյանքի միջազգայնացման, միասնացման նոր բարձրագույն ձև
4) հասարակության քաղաքական սոցիալ-տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական փոփոխություն

17 **Ասորեստանի տիրակալներին դասավորել ըստ կառավարման հաջորդականության.**

ա. Աշուրնածիրպալ II
բ. Սալմանասար I
գ. Թիգլաթպալասար III
դ. Թուկուլթի-Նինուրտա I

1) բ,դ,ա,գ
2) գ,ա,դ,բ
3) բ,գ,ա,դ
4) դ,բ,ա,գ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռոմի պապի աշխարհիկ պետության առաջացումը
բ. Անգլիայի արքա Հովհան Անհողինի գահակալման սկիզբը
գ. Յարմուկ գետի ճակատամարտն արաբների և բյուզանդացիների միջև
դ. Օտտոն I-ի կայսր հռչակվելը

1) գ,դ,բ,ա
2) ա,դ,բ,գ
3) բ,ա,գ,դ,
4) գ,ա,դ,բ



76 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայից
բ. Մոսուլի շրջանի ռազմակալումը անգլիական ուժերի կողմից
գ. Հ. Թրումանի ուղերձը ԱՄՆ-ի Կոնգրեսին
դ. Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի ռմբակոծումը Ճապոնիայի կողմից
ե. Մոսկվայի ճակատամարտը
զ. Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը
է. ՆԱՏՕ-ի օդուժի կողմից Սերբական Կրայինայի Հանրապետության ռմբահարումը
ը. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության եզրափակիչ ակտի ստորագրումը
թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանը
ժ. Վ. Վիլսոնի 14 կետերը

1) ա,դ,ժ,բ,գ,է,թ,զ,բ,ը
2) ժ,բ,ա,ե,դ,զ,գ,թ,ը,է
3) բ,ժ,ե,դ,գ,զ,ը,թ,է,ա
4) ժ,բ,դ,գ,է,ը,ե,թ,ա,զ

77 **Կատարել համապատասխանեցում.**

1. Նապոլեոն III
2. Մուհամեդ Ալի
3. Աբդուլ Համիդ II
4. Ալեքսանդր II
5. Նիկոլայ I

ա. 1855-1881 թթ.
բ. 1852-1870 թթ.
գ. 1825-1855 թթ.
դ. 1805-1840 թթ.
ե. 1876-1909 թթ.
զ. 1801-1825թթ.

1) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ե, 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-ե
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-ա
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-գ

**74** **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են 1950-60-ական թթ. արևելաեվրոպական երկրներում քաղաքական իրադրության սրման պատճառ.**

ա. Ստալինի մահից հետո Խորհրդային Միությունում բարձրագույն քաղաքական ղեկավարության փոփոխման գործընթացի առկայությունը
բ. «Կարիբյան ճգնաժամը»
գ. արևելաեվրոպական երկրներում բարեփոխումների կողմնակիցների ազդեցության աճը
դ. Տնտեսական փոխօգնության խորհրդի լուծարումը
ե. ԽՍՀՄ-ի վերահսկողության թուլացումը արևելաեվրոպական երկրներում
զ. արևելաեվրոպական երկրների անդամակցելը ՆԱՏՕ-ին
է. հասարակության դժգոհության առաջացում սոցիալական քաղաքականության բնագավառում

1) բ,դ,ե,զ
2) բ,գ,զ,է
3) ա,դ,ե,է
4) ա,գ,ե,է

**75** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սարգոն II-ի խոշոր արշավանքը Ուրարտուի դեմ
բ. Բաբելոնի գրավումը Մուրսիլիս I-ի կողմից
գ. Աշուրում աքքադական հարստության հաստատվելը
դ. Խեթական տերության հզորության գագաթնակետը
ե. Ասորեստանի նոր վերելքը Աշուրնածիրպալ II-ի օրոք
զ. Եգիպտոսի նվաճումը պարսիկների կողմից
է. համաեգիպտական XI հարստության հիմնումը Թեբեի փարավոնի կողմից
ը. Թիգլաթպալասար III-ի Բաբելոնի արքա հռչակվելը
թ. Թուդխալիաս II-ի գահակալության սկիզբը Խաթթիում
ժ. Թուկուլթի-Նինուրտա II-ի կողմից Բաբելոնի նվաճումը

1) թ,է,գ,զ,դ,բ,ը,ա,ժ,ե
2) գ,ա,է,թ,բ,ժ,դ,զ,ը,ե
3) է,գ,բ,թ,դ,ժ,ե,ը,ա,զ
4) բ,է,թ,գ,ժ,դ,զ,ը,ե,ա



**19** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը
բ. Նապոլեոն Բոնապարտի կողմից կատարված պետական հեղաշրջումը
գ. հանրապետության հռչակումը Անգլիայում
դ. Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության վերացումը

1) գ,ա,բ,դ
2) բ,ա,դ,գ
3) դ,բ,գ,ա
4) ա,բ,գ,դ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կոսովոյի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների կողմից
բ. Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագրի ընդունումը
գ. Հարավային Օսիայի անկախության հռչակումը
դ. Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) ստեղծումը

1) դ,բ,ա,գ
2) դ,բ,գ,ա
3) դ,ա,բ,գ
4) գ,ա,դ,բ

**21** **Ե՞րբ է Հռոմը գրավվել վեստգոթերի կողմից.**

1) 451թ.
2) 410թ.
3) 420թ.
4) 433թ.

**22** **Ե՞րբ է կնքվել Վեստֆալյան հաշտությունը.**

1) 1650թ.
2) 1630թ.
3) 1618թ.
4) 1648թ.

23 Ե՞րբ է առաջին անգամ գումարվել Խաղաղության համաշխարհային համաժողովը.

1) 1891թ.
2) 1843թ.
3) 1863թ.
4) 1878թ.

24 Ե՞րբ է Անտանտին միացել Իտալիան.

1) 1914թ.
2) 1917թ.
3) 1915թ.
4) 1916թ.

25 Ե՞րբ է Հունգարիայի կառավարությունը հայտարարել Վարշավյան դաշինքից դուրս գալու իր մտադրության մասին.

1) 1959թ.
2) 1993թ.
3) 1991թ.
4) 1956թ.

26 Ո՞վ է Ֆլավիոսների հարստության հիմնադիրը Հռոմում.

1) Վեսպասիանոսը
2) Դիոկղետիանոսը
3) Տիբերիոսը
4) Տրայանոսը

27 Ո՞վ է ռեֆորմիացիոն շարժման ղեկավարը Շվեյցարիայում.

1) Պիեռ Վալդոն
2) Մարտին Լյութերը
3) Ժան Կալվինը
4) Հենրիխ Բուրբոնը

28 Ու՞մ է պատկանում այն գաղափարը, թե գիտելիքը կարելի է ձեռք բերել փորձի միջոցով.

1) Բեկոնին
2) Կոպեռնիկոսին
3) Վեզալիուսին
4) Գալիլեյին



72 Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. սուպրեմատիզմ
2. ֆուտուրիզմ
3. փոփ-արթ
4. հայտեք
5. ֆովիզմ

ա. 1970-80-ական թթ. առաջացած հետմոդեռնիստական հոսանք ճարտարապետության մեջ
բ. Վերացական արվեստի հոսանքներից,որին բնորոշ է երկրաչափական վերացականությունը:
գ. Ֆրանսիական գեղանկարչության հոսանք,որն առաջացել է XXդ. սկզբին:
դ. Արվեստի ավանգարդիստական հոսանքներից,որը ձևավորվել է Իտալիայում:
ե. 1960-ական թթ. առաջացած ավանգարդիստական ուղղություն՝ որպես հակակշիռ և բողոքի արտահայտություն անառարկա վերացական արվեստի գաղափարներին:
զ. Փիլիսոփայության ուղղություն,որն առաջացել է Գերմանիայում

1) 1-զ, 2-ե, 3-գ, 4-դ, 5-ա
2) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-գ
3) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
4) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե

73 Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումների հետևանք.

ա. Խիստ մեծացավ ֆրանկական հետիոտն աշխարհազորի նշանակությունը:
բ. Ստեղծվեց մշտական մարտունակ հեծելազոր:
գ. Բարձրացավ Մերովինգների արքայատոհմի հեղինակությունը:
դ. Ձևավորվեց ֆրանկական հզոր նավատորմը:
ե. Հաստատվեց զինվորական ծառայության դիմաց հողատիրույթների շնորհման նոր կարգ:
զ. Բռնագրավվեցին անհնազանդ հողատերերի և եկեղեցու տիրույթների մի մասը:
է. Ֆրանկական բանակում զգալիորեն մեծացավ օտար վարձկանների թիվը և կշիռը:
ը. Նկատելիորեն ընդարձակվեցին պետության սահմանները, ժամանակավորապես ուժեղացավ կենտրոնական իշխանությունը:

1) բ,դ,զ,է
2) գ,դ,զ,է
3) ա,զ,դ,ը
4) բ,ե,զ,ը

71 Նշված տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. ազատականություն
2. շովինիզմ
3. բաբիականություն
4. չարտիզմ
5. նոր ազատականներ

ա. Հետադիմական ազգայնամոլության մեծապետական դրսևորում, որի նպատակն է ձուլելու կամ ոչնչացնելու հպատակ ժողովուրդներին:
բ. Մեծ Բրիտանիայում XIXդ. 30-50-ական թթ. ծավալված զանգվածային շարժում, որը նպատակ ուներ հասնելու տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի հաստատմանը և հասարակության ազատականացմանը:
գ. XIXդ. գաղափարական-քաղաքական գլխավոր հոսանքներից,որի հիմքը կազմում էր մարդու բնական իրավունքի տեսությունը:
դ. XIXդ. կեսերին Իրանում տարածված կրոնա-քաղաքական ուսմունք, որի նպատակն էր երկրում հաստատել սոցիալական արդարություն և հավասարություն:
ե. XIXդ. Եվրոպայում լայնորեն տարածված ուսմունքի անդամներ, որոնք պայքար էին մղում աղքատության վերացման և սոցիալական արդարության հաստատման համար:
զ. Եվրոպական խոշոր պետություններում տարածված շարժման մասնակիցներ, որոնց կարծիքով անհրաժեշտ էր մեծացնել պետության կարգավորիչ իրավունքները:

1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-դ
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-զ
3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե, 5-բ
4) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-գ



29 Ի՞նչ անունով է հայտնի 2005թ. հեղափոխությունը Ղրղզստանում.

1) «Նարնջագույն հեղափոխություն»
2) «Վարդերի հեղափոխություն»
3) «Մեխակների հեղափոխություն»
4) «Կակաչների հեղափոխություն»

30 Ի՞նչ գաղափարով էր հանդես գալիս Իրանի նախագահ Մ. Խաթամին.

1) «նոր մեկնարկի»
2) «քաղաքակրթությունների երկխոսության»
3) «նոր աշխարհակարգի»
4) «նոր սահմանագծերի»

31 Ո՞րն էր Ամենհոտեպ IV փարավոնի կողմից ձեռնարկված բարեփոխումների գլխավոր հետևանքը.

1) Վերսկսվեցին արտաքին նվաճումները, պետության սահմանները խիստ ընդարձակվեցին:
2) Վերամիավորվեցին Վերին և Ներքին Եգիպտոսները:
3) Խիստ կրճատվեցին հիքսոսների ազնվականության իրավունքները:
4) Սահմանափակվեցին Ամոնի տաճարի քրմության իշխանությունն ու ազդեցությունը:

32 Ո՞րն էր Կարլոս Մեծի կողմից գյուղացիությանը ռազմական ծառայությունից ազատելու հիմնական պատճառը.

1) Ավատատերերն արգելում էին իրենց ենթակա գյուղացիներին ծառայել բանակում:
2) Ֆրանկական տերությունում գյուղացիությունը համարվում էր անբարեհույս տարր:
3) Գյուղացիությունը հնարավորություն չուներ ձի և սպառազինություն ձեռք բերելու:
4) Արաբների արշավանքների հետևանքով Ֆրանկական տերության գյուղացիության թիվը խիստ կրճատվել էր:

33 Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Էխնաթոն
բ. Շամշի-Ադդու
գ. Ռամզես II
դ. Համմուրապի
ե. Թութմոս I

1) ե,գ,բ,ա,դ
2) բ,դ,ե,ա,գ
3) դ,ա,գ,ե,բ
4) ա,բ,դ,ե,գ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Երկրորդ աշխարհամարտի առաջին փուլը
բ. Լեյբորիստների առաջին կառավարությունը Անգլիայում՝ Ռ. Մակդոնալդի վարչապետությամբ
գ. Համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը
դ. «Բարգավաճման ժամանակաշրջանը» ԱՄՆ-ում

1) դ,բ,գ,ա
2) բ,դ,ա,գ
3) գ,ա,դ,բ
4) ա,դ,բ,գ

35 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է».**

1) Շեքսպիրը
2) Ռաբլեն
3) Գալիլեյը
4) Բրունոն

36 **Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը. «ԽՍՀՄ-ը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը».**

1) Մ. Գորբաչովի 1991թ. դեկտեմբերի 25-ին հրապարակած հրաժարականից
2) Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագծից
3) Ռուսաստանի դաշնության նախագահի Բ. Ելցինի ելույթից
4) Անկախ Պետությունների Համագործակցության կազմավորման վերաբերյալ պայմանագրից

37 **Կատարել համապատասխանեցում.**

1. Լիսիմաքոս
2. Անտիպատրոս
3. Պտղոմեոս
4. Էվմենես

ա. Եգիպտոս
բ. Փոքր Ասիա
գ. Բաբելոնիա
դ. Մակեդոնիա
ե. Թրակիա

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ



69 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք տեղ են գտել Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրս»-ի մեջ.**

ա. Բանկային համակարգի կարգավորում, կենտրոնական դրամատներին փոխատվությունների հատկացում
բ. Պետության կողմից նպաստների տրամադրում ազարակատերերին
գ. Վերակառուցման ֆինանսական կորպորացիայի ստեղծում
դ. Արտադրության ծավալների, իրացման շուկաների, գների և աշխատավարձերի նվազագույն մակարդակի սահմանում
ե. գիտության և տեխնոլոգիաների զարգացում
զ. Հասարակական աշխատանքների համակարգի սահմանում
է. Օտարերկրյա կապիտալի ներգրավում տնտեսության մեջ

1) ա,բ,դ,զ
2) գ,դ,զ,է
3) ա,բ,ե,զ
4) ա,գ,դ,ե

70 **Նշված տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. հելոտներ
2. էկլեսիա
3. դեմարքոս
4. էֆոր

ա. Ժողովրդական ժողով Հին Աթենքում
բ. գերագույն վերահսկիչ գործառույթներ իրականացնող պաշտոնյա Սպարտայում
գ. աթենքի ատենակալների դատարանի անդամ
դ. դորիացիների կողմից նվաճված աքայացիների ընդհանուր անվանումը
ե. տնտեսական, վարչական և ռազմաքաղաքական ինքնուրույն միավորի ընտրովի ղեկավար

1) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ

67 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք վերաբերում են Մարտին Լյութերի տեսակետներին.**

ա. Հռոմի պապն իրավունք չունի մեղքերին թողություն տալու, քանի որ դրանք պետք է քավել ոչ թե թուղթ գնելով, այլ տանջանքներով:
բ. Հռոմի պապի գերագահությունը պետք է տարածվի ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունների վրա:
գ. Հռոմի պապը չպիտի խառնվի աշխարհիկ իշխանության գործերին, իսկ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը:
դ. Հավատքի միակ աղբյուրը Աստվածաշունչն է:
ե. Սուրբ Գիրքը պետք է կարդան և մեկնաբանեն միայն կաթոլիկ հոգևորականները:
զ. Աստվածաշնչում տեղ գտած սկզբունքներին հետևող հավատացյալները կարող են հասնել փրկության առանց եկեղեցու միջնորդության:
է. Աստվածաշնչի դրույթներին հավասար հավատքի աղբյուր են հանդիսանում նաև տիեզերական ժողովների կանոնները և պապերի որոշումները:

1) գ,դ,ե,է
2) ա,գ,դ,զ
3) բ,դ,ե,է
4) ա,բ,դ,զ

68 **Նշված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. 1911-1912թթ. պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունից զավթած հյուսիսաֆրիկյան տարածքներում Իտալիան ստեղծեց Լիբիա գաղութը:
բ. 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով Ճապոնիային անցավ ողջ Սախալին կղզին:
գ. Բալկանյան թերակղզու և Լատինական Ամերիկայի պետությունները ձևավորվել են արդարացի պատերազմների արդյունքով:
դ. Մասնակցելով Առաջին աշխարհամարտին՝ Ֆրանսիան նպատակ էր հետապնդում զավթելու Շվեյցարիան և Բելգիան:
ե. Անգլիան Գերմանիային պատերազմ է հայտարարել 1914թ. օգոստոսի 1-ին:
զ. 1917թ. Անտանտի կողմից առաջին աշխարհամարտի մեջ մտան Լատինական Ամերիկայի 14 երկրներ:
է. 1917թ. բոլշևիկյան հեղաշրջման ընթացքում Ռուսաստանի 25 քաղաքներում իշխանությունը գրավվել է ուժի գործադրմամբ:
ը. Առաջին անգամ համաշխարհային պատերազմի ընթացքում քիմիական զենք օգտագործեցին գերմանացիները՝ Իպր քաղաքի մոտ:

1) բ,դ,ե,է
2) ա,գ,զ,ը
3) գ,զ,է,ը
4) դ,ե,բ,է



38 **Համապատասխանեցնել մշակույթի գործիչների անունները ստեղծագործությունների հետ.**

1. Մ.Շոլոխով
2. Ա. Տոլստոյ
3. Պ. Պիկասո
4. Ալ. Ֆադեև
5. Ս. Դալի

ա. «Զազային երգիչը»
բ. «Խաղաղ Դոն»
գ. «Տառապանքի ուղիներով»
դ.« Գեռնիկա»
ե. «Ջախջախում»
զ. «Հիշողության հարատևությունը»

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-զ, 5-ե
2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-ե
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե, 5-զ
4) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ, 5-զ

39 **Ո՞վ է կայսր հռչակվել 395թ Հռոմեական կայսրության արևմտյան մասում.**

1) Օդոակրը
2) Թեոդոսիոս II-ը
3) Արկադիոսը
4) Հոնորիոսը

40 **Ո՞վ է «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրման հեղինակը.**

1) Է. Կիրխները
2) Բ. Բրեխտը
3) Ժ. Բրակը
4) Խ. Միրոն

41 **Ո՞րն էր Ռուսաստանում ծավալված սլավոնասերների շարժման գլխավոր հետևանքը.**

1) Կտրուկ բարձրացավ ռուսների ազգային ինքնագիտակցությունը, խորացավ վերջինիս մեծապետական բնույթը:
2) Ռուսաստանում լայնորեն տարածվեցին սոցիալ-ժողովրդավարական գաղափարները:
3) Կասեցվեց Ռուսաստանի արդիականացման գործընթացը:
4) Երկրում հաստատվեց սահմանադրական միապետություն:

**42** **Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հ. Թրումանի «դրույթը» (դոկտրինան).**

1) չթույլատրել ԽՍՀՄ-ի և նրա գաղափարախոսության հետագա տարածումը, հնարավորության դեպքում հետ շպրտել ԽՍՀՄ-ին իր ազդեցության նախկին սահմանները
2) ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիքը, նույնիսկ կիրառել այն
3) խաղաղության պահպանումը և անվտանգության ապահովումը
4) մեծ պետությունների միջև կառուցողական երկխոսության հաստատումը

**43** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դարեհ I-ի անհաջող արշավանքը Հունաստան
բ. Իտալիայում հունական գաղութների հիմնադրման սկիզբը
գ. Պյուռոսի պարտությունը Բենեվենտումի մոտ
դ. Անտիգոնոսի պարտությունը դիադոխների միացյալ բանակից

1) դ,բ,գ,ա
2) ա,դ,բ,գ
3) բ,ա,դ,գ
4) ա,գ,դ,բ

**44** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. իշխան Իգորի արշավանքը ղփչաղների դեմ
բ. սլավոնական այբուբենի ստեղծումը եղբայրներ Կոստանդինի(Կիրիլ) և Մեֆոդիոսի կողմից
գ. Տրապիզոնի կայսրության նվաճումը թուրքերի կողմից
դ. քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայում
ե. Կոսովոյի ճակատամարտը սերբական և թուրքական բանակների միջև
զ. Կոստանդնուպոլսի ազատագրումը կայսր Միքայել VIII Պալեոլոգոսի կողմից

1) բ,դ,ա,զ,ե,գ
2) գ,ա,բ,ե,դ,զ
3) բ,դ,ա,ե,գ,զ
4) դ,բ,ա,ե,գ,զ



**65** **Կատարել համապատասխանեցում.**

1. հանրապետական կարգերի հաստատումը Հռոմում
2. Սպարտայի արքա Արքիդամոսի բանակի ներխուժումը Ատտիկա
3. Պլատեայի ճակատամարտը հունական և պարսկական բանակների միջև
4. Մակեդոնիայի արքա Պերսևսին պատերազմի հայտարարումը Հռոմի կողմից

ա. Ք.ա. 431թ.
բ. Ք.ա. 171թ.
գ. Ք.ա. 510թ.
դ. Ք.ա. 479թ.
ե. Ք.ա. 280թ.

1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
4) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ

**66** **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սրբազան հռոմեական կայսրության առաջացումը | 1. | 1099թ. | 1. | Թեհրան | 1. | Օտտոն I |
| 2. | Ղաջարների հարստության հաստատումը | 2. | 751թ. | 2. | Հռոմ | 2. | Գոտֆրիդ Բույոնցի |
| 3. | Արքայական գահը Կարոլինգներին անցնելը | 3. | 962թ. | 3. | Երուսաղեմ | 3. | Աղա Մոհամմադ խան |
| 4. | Խաչակրաց առաջին թագավորության առաջացումը | 4. | 1796թ. | 4. | Սուասոն | 4. | Պիպին Կարճահասակ |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 3 |
| 2 | 3 | 1 | 4 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 1 | 3 | 2 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 1 |
| 2 | 4 | 2 | 3 |
| 3 | 1 | 3 | 2 |
| 4 | 3 | 1 | 4 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 1 |
| 2 | 4 | 1 | 3 |
| 3 | 2 | 4 | 4 |
| 4 | 1 | 3 | 2 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 1 |
| 2 | 4 | 1 | 3 |
| 3 | 1 | 4 | 2 |
| 4 | 2 | 3 | 4 |

61 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Չուդ լճի ճակատամարտը
բ. Սուասոնի ճակատամարտը
գ. Ադրիանապոլսի ճակատամարտը
դ. Կատալաունյան դաշտի ճակատամարտը
ե. Կուլիկովոյի ճակատամարտը
զ. Յարմուկ գետի ճակատամարտը
է. Ննայի ճակատամարտը
ը. Անկարայի ճակատամարտը
թ. Մանազկերտի ճակատամարտը
ժ. Պուատիեի ճակատամարտը

1) թ,է,ա,գ,դ,բ,ժ,զ,ե,ը
2) գ,դ,բ,զ,ժ,թ,է,ա,ե,ը
3) դ,գ,զ,բ,ժ,է,ը,թ,ե,ա
4) բ,ա,ժ,ը,գ,ե,թ,դ,զ,է

62 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եվրոպական դրոշը Եվրոպայի խորհրդի կողմից որպես խորհրդանիշ ընդունվելը
բ. «Ջազային երգիչը» ժապավենի ցուցադրումը
գ. «Բրեժնևյան հայեցակարգի» ընդունումը Արևելյան Եվրոպայի երկրներում
դ. Շենգենյան համաձայնագրի ուժի մեջ մտնելը
ե. Ժ. Պ. Սարտրին Նոբելյան մրցանակի շնորհումը
զ. գերմանական զորքերի ներխուժումը Ավստրիա

1) զ,բ,գ,ա,ե,դ
2) բ,զ,ա,ե,գ,դ
3) գ,բ,ա,ե,դ,զ
4) բ,զ,գ,դ,ե,ա

63 **Պատմական ո՞ր ժամանակաշրջանին էր հատուկ հետևյալ ասույթը. «Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»:**

1) Ռեֆորմացիայի ժամանակաշրջանին
2) «Պերիկլեսյան ոսկեդարի» ժամանակաշրջանին
3) Բարբարոսական թագավորությունների ժամանակաշրջանի
4) Հռոմեական հանրապետության ժամանակաշրջանին

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Կանգնեցնել Անգլիայի սողքը դեպի սոցիալիզմ»:**

1) Ջ. Մեյջորը
2) Ու. Չերչիլը
3) Մ. Թետչերը
4) Թ. Բլեյրը



45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա.Սոցիալիստական վարչակարգի փլուզումը Արևելյան Եվրոպայում
բ. ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի միջև հարաբերությունների վերականգնումը
գ. Վարշավյան դաշինքի անդամ երկրների ներխուժումը Չեխոսլովակիա
դ. Մաաստրիխտյան պայմանագրի ստորագրումը
ե. Աբխազիայի անկախության հռչակումը

1) ա,գ,բ,դ,ե
2) գ,դ,ե,ա,բ
3) բ,գ,ա,ե,դ
4) գ,բ,դ,ե,ա

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Տիբերիոս
2. Մարկոս Ավրելիոս
3. Օկտավիանոս-Օգոստոս
4. Կլավդիոս
5. Տրայանոս

ա.161-180թթ.
բ. Ք.ա. 27թ.-Ք.հ. 14թ.
գ. 14-37թթ.
դ. 98-117թթ.
ե. 41-54թթ.
զ. 69-79թթ.

1) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-զ, 4-գ, 5-ա
3) 1-ե, 2-բ, 3-դ, 4-զ, 5-գ
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ

47 **Կատարել համապատասխանեցում.**

1. անգլիական խորհրդարանի հրավիրումը Սիմոն դը Մոնֆորի կողմից
2. Թավրիզի գրավումը շահ Իսմայիլի կողմից
3. Բալկանյան թերակղզու նվաճման սկիզբը թուրքերի կողմից
4. օսմանյան զորքերի ջախջախումը Լենկ Թեմուրի կողմից

ա.1352թ.
բ. 1265թ.
գ. 1402թ.
դ. 1502թ.
ե. 1326թ.

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. սահմանադրական միապետության հռչակումը Սերբիայում
2. Ռումինիայի սահմանադրության ընդունումը
3. Բուլղարիայի վերջնական անկախության հաստատումը
4. Մակեդոնիայի բաժանումը Սերբիայի, Հունաստանի և Բուլղարիայի միջև

ա. 1908թ.
բ. 1866թ.
գ. 1913թ.
դ. 1888թ.
ե. 1903թ.

1) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե



59 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի գլխավոր նպատակները.**

ա. մարդու իրավունքների և ազատությունների խրախուսում և տարածում՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից ու կրոնից
բ. ագրեսիվ գործողությունների ճնշում
գ. միմյանց նկատմամբ փոխադարձ օգնության ցուցաբերում՝ ներառյալ զինված ուժերի կիրառում
դ. տնտեսական, սոցիալական և հումանիտար բնույթի խնդիրների կարգավորում
ե. խաղաղության և միջազգային անվտանգության պահպանում և ապահովում
զ. անդամ յուրաքանչյուր պետության ռազմական հզորության ամրապնդում
է. անդամ պետությունների համատեղ գործողություններ նրանց քաղաքական անկախությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում

1) բ,գ,դ,ե
2) ա,դ,ե,զ
3) ա,բ,դ,ե
4) գ,դ,զ,է

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ
բ. Երուսաղեմի առաջին գրավումը Նաբուգոդոնոսոր II-ի կողմից
գ. Պունիկյան պատերազմների սկիզբը
դ. Էտրուսկյան-կարթագենյան միացյալ նավատորմի հաղթանակը Կորսիկայի մոտ
ե. Կլիսթենեսի բարեփոխումներն Աթենքում

1) դ,բ,գ,ա,ե
2) գ,ա,դ,ե,բ
3) ա,ե,գ,բ,դ
4) բ,դ,ե,ա,գ

57 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Անտոնինոսների հարստության կայսրերի վարած արտաքին քաղաքականության հետևանք.**

ա. Հռենոսից մինչև Դանուբ ընկած շրջանում կառուցվեց սահմանային ամրությունների շղթա:
բ. Նվաճվեց և պրովինցիայի վերածվեց Դակիան(այժմ՝ Ռումինիա):
գ. Բրիտանիայում կառուցվեց ամրությունների մի շղթա, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:
դ. Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև բաժանվեց Մեծ Հայքի թագավորությունը:
ե. Նվաճվեցին Բրիտանիայի մեծ մասը, Թրակիան և Մավրիտանիան:
զ. Ժամանակավորապես կանխվեց գերմանական ցեղերի ներխուժման վտանգը:

1) ա,գ,ե
2) ա,դ,զ
3) բ,դ,ե
4) բ,գ,զ

58 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են «Պերիկլեսյան ոսկեդարի» ժամանակաշրջանի հետևանք.**

ա. Պաշտոնի դիմաց մտցվեց վարձատրություն, որով չարքային քաղաքացիներն էլ ներառնվեցին պետական կառավարման համակարգում:
բ. Աթենքն իր շուրջը միավորեց ողջ Հունաստանը:
գ. Հունաստանում հաստատվեց Սպարտայի գերիշխանությունը, իսկ Աթենքը վերածվեց չարքային պոլիսի:
դ. Էկլեսիան (ժողովրդական ժողով) վերածվեց պետության իրական ղեկավար մարմին:
ե. Յուրաքանչյուր աթենացի իրավունք ստացավ բողոքարկելու Էկլեսիայի ընդունած օրենքը կամ օրենքի նախագիծը:
զ. Աթենքի գերիշխանությունը տարածվեց նաև Փոքր Ասիայի հունական պոլիսների վրա:
է. Նորակառույց « Երկար պարիսպների» շնորհիվ Աթենքը հուսալիորեն պաշտպանվեց թշնամու հարձակումներից:

1) ա,դ,ե,է
2) բ,գ,ե,զ
3) ա,գ,զ,է
4) բ,գ,դ,ե



49 **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել նրանց գործունեության բնագավառների հետ.**

1. Ա. Կուրոսավա
2. Ջ. Սթայնբեք
3. Մ. Լինդեր
4. Բ. Գուդման
5. Մ. Շագալ

ա. ճարտարապետ
բ. նկարիչ
գ. երգիչ
դ. կինոդերասան
ե. գրող
զ. կինոռեժիսոր

1) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-գ
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-բ
3) 1-զ, 2-ե, 3-գ, 4-դ, 5-ա
4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-զ, 5-դ

50 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Մոսկվայի ճակատամարտը
2. Հայրենական մեծ պատերազմի սկիզբը
3. Պիրլ Հարբորի ռմբակոծումը
4. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը

ա.1941թ. դեկտեմբերի 7
բ. 1941թ. հունիսի 30
գ. 1941թ. հունիսի 22
դ. 1941թ. դեկտեմբերի 6
ե. 1939թ. սեպտեմբերի 1

1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
3) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

### Բ մակարդակ

51 Նշված պնդումներից ո՞րն է սխալ.

1) Խեթական տերության տրոհումը տարբեր պետությունների տեղի է ունեցել Ք.ա. XIIդ. սկզբին:
2) Աքքադի թագավորության հիմնադիր Սարգոնն արձանագրություններում իրեն կոչում էր «աշխարհի չորս կողմերի» թագավոր:
3) Եգիպտոսի Միջին թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ XII հարստության օրոք:
4) Կասիտական ցեղերի գերիշխանությունը Միջագետքում հաստատվել է ամորեական հարստության անկումից հետո:

52 Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

1) «Երգ իմ Սիդի մասին» միջնադարյան վիպերգը նվիրված է Դանիայի թագավոր Բեովուլֆին:
2) 12 գրքից բաղկացած «Գոթերի պատմության» հեղինակն է Յորդանը:
3) Ազատ արվեստները Եռյակ և Քառյակ մասերի են բաժանել VIդ. կրթական գործի կազմակերպիչներ Բոեցիոսն ու Կասիոդորը:
4) Կարլոս Մեծի 778թ. Իսպանիա կատարած անհաջող արշավանքին է նվիրված «Երգ Նիբելունգների մասին» վիպերգը:

53 Նշված պնդումներից ո՞րն է սխալ.

1) 1911թ. ռուսական զորքերի ներխուժումը Հյուսիսային Իրան հարկադրեց առաջադիմական ուժերին հեռանալու իշխանությունից:
2) Ծագումով ալբանացի Մուհամեդ Ալին, դառնալով Եգիպտոսի կառավարիչ, իրականացրեց երկրի զարգացմանը նպաստող բազմաթիվ բարեփոխումներ:
3) 1913թ. «Ալ Ահդ» («Պատգամ») կազմակերպության կողմից իրականացված ապստամբության շնորհիվ թուրքական լծից ազատագրվեցին Օսմանյան կայսրության արաբական տիրույթները:
4) 1916թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի հիման վրա Օսմանյան կայսրության տիրույթների մեծ մասը բաժանվեց Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

54 Տալ «մեծ պոնտիֆեքս» հասկացության բացատրությունը.

1) Հռոմի քրմապետ
2) Հին Հռոմի կառավարիչ
3) հռոմեական բանակի հրամանատար
4) Հռոմի Սենատի նախագահ



55 Ո՞վ էր մեծ մագիստրոսը.

1) բյուզանդական նահանգապետ
2) միջնադարյան համալսարանի ռեկտոր
3) հոգևոր-ասպետական միաբանության ղեկավար
4) Ֆրանկական տերության բանակի գլխավոր հրամանատար

56 Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. դոկտրինա
2. հեղափոխություն
3. գաղափարախոսություն
4. վերափոխում
5. արդիականացում

ա. Հասարակական կյանքի փոփոխություն, վերադասավորություն
բ. Հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական փոփոխություն
գ. Ժամանակի տնտեսության և գիտության զարգացման ամենաբարձր մակարդակին համապատասխան հասարակական կյանքի բոլոր բնագավառների կատարելագործում, զարգացման նոր աստիճանի ապահովում
դ. Գաղափարների և հայացքների համակարգ
ե. Քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ
զ. Ազգաբնակչությանն ամենատարբեր բնույթի տեղեկատվության հաղորդման միջոցների համակարգ

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-զ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-բ
4) 1-ա, 2-զ, 3-գ, 4-բ, 5-ե